

ՉԲԱՂՄՈՒՆՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Պաշտոնի (գբաղմունքի) անվանումը	Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում մասնագիտության գյուղատնտեսական արտադրության տրակտորիստ-մեքենավար
Դերը	Իրականացնել տարբեր բնակլիմայական գոտիներում տրակտորային ագրեգատներով հողի հիմնական, նախացանքային, միջշարային և միջբնային մշակում, կատարել ցանքսի, սածիլների, պալարապտուղների և տնկիների տնկում, սնուցում, մոլախոտերի և հիվանդությունների դեմ պայքարի, բերքահավաքի, մթերքների և տարբեր տեսակի բեռների բեռնման, տեղափոխման և բեռնաթափման աշխատանքներ, կատարել տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների տեխնիկական խնամք, սպասարկում, ընթացիկ նորոգում և պահպանում:
Խնդիրների բնագավառ 1. Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործման կազմակերպում	
Աշխատանքային գործընթացները	
Խնդիրների բնագավառ 2, Գյուղատնտեսական աշխատանքների արտադրական օրծընթացների կատարում	
Աշխատանքային գործընթացները	<ul style="list-style-type: none"> • Ընտրել հացահատիկային մշակաբույսերի և հատիկաընդեղեն, շաքարի ճակնդեղի, ծխախոտի բանջարանոցային մշակաբույսերի և կարտոֆիլի, խաղողի և պտղատու այգիների մշակման ու բերքահավաքի տեխնոլոգիական գործընթացները և օգտագործվող մեքենաները, օգտվել համապատասխան օպերացիոն տեխնոլոգիական քարտերից: • Իրականացնել հողի հիմնական, նախացանքային, միջշարային և միջբնային մշակում, կատարել ցանքսի, պալարապտուղների և տնկիների ու սածիլների տնկում, սնուցում, մոլախոտերի և հիվանդությունների դեմ պայքարի, բերքահավաքի, մթերքների և տարբեր տեսակի բեռների բեռնման, տեղափոխման և բեռնաթափման աշխատանքների կատարում:
Խնդիրների բնագավառ 3, Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների անսարքությունների բացահայտում և դրանց տեխնիկական սպասարկման ու ընթացիկ նորոգման աշխատանքների կատարում	
Աշխատանքային	• ընտրել տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների տեխնիկական սպասարկումների ու ընթացիկ

գործընթացները	Նորոգումների եղանակները, իրականացնել ըստ պարբերականության յուրաքանչյուր տեխնիկական սպասարկման աշխատանքները, <ul style="list-style-type: none"> • կատարել տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների տեխնիկական սպասարկման աշխատանքները, • Օգտվել շահագործական հրահանգներից:
Խնդիրների բնագավառ 4. Ֆինանսական վերլուծություն և հաշվետվություններ	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • կատարել աշխատանքային գործնեության վերլուծություն և ռիսկերի գնահատում, • կատարել կատարված աշխատանքների և ծախսերի գնահատում, վերանայել և որոշել առանձին տեխնոլոգիաների և եղանակների հետագա օգտագործման նպատակահարմարությունը:
Խնդիրների բնագավառ 5. Մարքեթինգ և կապ հանրության հետ:	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • մասնակցել տեխնոլոգիական գործընթացների մեքենայական աշխատանքների ցուցադրմանը, • ներկայացնել գյուղատնտեսական աշխատանքների կատարման համար անհրաժեշտ տեխնոլոգիաներ:
Խնդիրների բնագավառ 6. Հաղորդակցություն	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • վարել բանակցություններ մատակարարող, սպասարկող և պատվիրատու անձանց ու կազմակերպությունների հետ, • համագործակցել և կնքել պայմանագրեր:
Պատասխանատվությունը և բարդության աստիճանը	
Բարդության աստիճանը	Պարզ և միջին բարդության աշխատանքների կատարում գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործման, տեխնիկական սպասարկումների և ընթացիկ նորոգման գործընթացներում,
Պատասխանատվությունը	<p>Գյուղատնտեսական արտադրության տրակտորիստ-մեքենավարը պատասխանատու է ագրո-տեխնիկական պահանջներին համապատասխան գյուղատնտեսական աշխատանքների, ինչպես նաև տեխնիկական սպասարկումների և ընթացիկ նորոգման ժամանակին և որակով կատարելու, նորոգված մեքենամասերի և հանգույցների հոսալիության և անվտանգության համար:</p> <p>Պատասխանատու է իր հետ աշխատող անձնակազմի անվտանգության համար:</p> <p>Գործում է ինքնուրույն կամ տնտեսության ղեկավարի ենթակայության ներքո:</p> <p>Խնդիրների ծագման դեպքում հիմնականում ընդունում է ինքնուրույն որոշում, կամ առավել բարձր որակավորում</p>

	<p>ունեցող մասնագետի օգնությամբ:</p>
<p>Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և վերաբերմունք</p>	
<p>Մասնագիտական գիտելիքները</p>	<p>Տրակտորիստ-մեքենավարը պետք է իմանա.</p> <ul style="list-style-type: none"> • մասնագիտական գործնելությանը վերաբերող նորմատիվող և նորմատիվային պահանջները, • մասնագիտական ու տեղեկատվական գրականություն և աշխատանքային գործնելության հետ առնչվող տերմինների իմաստը, • գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործման և նորոգման տեխնոլոգիական գործընթացները, • տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների նշանակությունը, կառուցվածքային առանձնահատկությունները, աշխատանքի սկզբունքները, • տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործման կանոնները, • տրակտորներում կիրառվող յուղանյութերի, վառելիքների և տեխնիկական հեղուկների տեսակները, հատկությունները և տարատեսակները, • տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների տեխնիկական սպասարկման առանձնահատկությունները, • գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների խնամքի և պահպանման առանձնահատկությունները, • տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների զննման, անսարքությունների բացահայտման և դրանց վերանորոգման եղանակները, • տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների աշխատանքային պարամետրերի վերահսկողության ձևերը՝ դրանց շահագործման ժամանակ, • պարզ հաշվարկներ, գծագրեր ընթերցելը կամ կատարելը կապված գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործման և նորոգման գործընթացների հետ, • մշակաբույսերի մշակության և բերքահավաքի ագրոտեխնիկական պահանջները, • ճանապարհային երթևեկության կանոնները, • տրակտորային ագրեգատների վրա աշխատանքի անվտանգության կանոնները, • հակահրդեհային անվտանգության կանոնները, • չափիչ-ստուգիչ սարքերից և սարքավորումներից օգտվելու կարգը, • համակարգչային տեխնիկայից օգտվելու պարզագույն կանոնները:
<p>Մասնագիտական կարողությունները</p>	<p>Տրակտորիստ-մեքենավարը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • բարձր որակավորում ունեցող մասնագետի օգնությամբ ոչ բարդ տեխնիկական հաշվարկներ կատարել, ինքնուրույն գծագրեր ու սխեմաներ ընթերցել, • ճիշտ ընտրել գյուղատնտեսության տվյալ գոտու պայմաններում իրականացվող դաշտային մեքենայական

	<p>աշխատանքների համար համապատասխան տրակտորներ և գյուղատնտեսական մեքենաներ,</p> <ul style="list-style-type: none"> • կազմել մեքենատրակտորային ագրեգատ (USU), • ընտրել USU-ի շարժման եղանակները և շրջադարձի ձևերը, • ընտրել տեխնոլոգիական և ագրեգատների շահագործական ցուցանիշները, • օգտվել գյուղատնտեսական մեքենաների ու սարքավորումների շահագործման և նորոգման հետ առնչվող գործող չափորոշիչներից, • ինքնուրույն քանդել, հավաքել, կարգավորել տրակտորների գյուղատնտեսական մեքենաների հանգույցները և մեխանիզմները, • ինքնուրույն կատարել տեխնոլոգիական գործընթացներ, • կարգավորել տրակտորի հանգույցները և մեխանիզմները, • կարգավորել գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների բանող օրգանները, • մասնակցել բանող օրգանների անսարքությունների բացահայտմանը, կատարել դրանց շահագործման և նորոգման աշխատանքները, • հավաքագրել, պահպանել և փոխանցել շահագործման ժամանակ վիճակագրական տարբեր բնույթի տվյալներ, • պահպանել տեխնիկայի հակահրդեհային և անվտանգ
<p>Լրացուցիչ կարողություններ, հմտություններ և վերաբերմունք</p>	<p>Որակի վերահսկման վերլուծություն: Որակը գնահատելու համար կատարում է ստուգում կատարված աշխատանքի տեխնոլոգիական և շահագործական ցուցանիշների համապատասխանելիությունը ագրոտեխնիկական պահանջներին: Տրամաբանում և որոշման կայացում: տարբերակել խնդիրների այլընտրանքային լուծումների, բխող հետևությունների կամ մոտեցումների ուժեղ և թույլ կողմերը:</p> <p>Ուսուցում: Սովորեցնելու կարողություն</p> <p>Ժամանակի կառավարում: Ճշգրտորեն կառավարել սեփական ժամանակը:</p> <p>Օտար լեզու.: Ասոյունավետ հաղորդակցվել առնվազն մեկ օտար լեզվով (մասնագիտական գործնական առնչվող):</p> <p>Համակարգչային և ինտերնետային հիմնական գիտելիքներ: Հաճախ կիրառվող համակարգչային ծրագրերի` Microsoft Word, Excel, Corel DRAW and Power Point-ի, իմացություն, ինչպես նաև բավականաչափ գիտելիք համացանցից օգտագործելու համար:</p> <p>Մարդկանց ընկալելու ունակություն: Ուշադրություն դարձնել մարդկանց արձագանքներին և փորձել ըմբռնել դրանց պատճառները:</p>